ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

Հ. Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Մարքս-լենինյան տեսությունը մասնավոր սեփականության, դասակարգերի, պետության և իրավունքի ծագումը կապում է հասարակության արտադրողական ուժերի զարգացման հետ։ Այս տեսանկյունով է շարադրել իր հայացքները մարդկային հասարակության զարգացման մասին նաև Ալ. Մյասնիկյանը։

Նա «Արդի տնտեսական կյանքը» հոդվածում քննադատելով Սիսմոնդիի, Է. Դավթի հայացքները հասարակության զարգացման մասին նշել է, որ այդ զարգացումը տեղի է ունենում ոչ թե «բնության քմահաճ օրենքների» ուժով, այլ մարդկանց կամքից անկախ գործող օրինաչափությունների, հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքների շնորհիվ։ Ինչո՞վ բացատրել, որ նախնադարյան հասարակական ֆորմացիան գոյություն ունենալով շատ հազարավոր տարիներ, այնուամենայնիվ հեռանում է պատմության թատերաբեմից, որից հեռացել են նաև նրան փոխարինող ստրկատիրական և վերջինիս փոխարինող ֆեոդալական հասարակական ֆորմացիաները։ «Հարցը մեխանիկական կամ օրգանական պրոցեսի մեջ չէ, այլ տնտեսական կյանքի առաջընթացության, վերջին հաշվով՝ արտադրող ուժերի զարգացման մեջ է։ Արտադրող ուժերի զարգացումը թև է տալիս մարդուն, բնությունը ենթարկում է նրան»[1]։

Նախնադարյան համայնական հասարակությունը Ալ. Մյասնիկյանը վերլուծել է հենվելով Ֆ. Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» աշխատության դրույթների վրա։ Նախնադարյան հասարակարգի արտադրողական ուժերը թույլ զարգացած լինելու հետևանքով նախնադարյան մարդը դարձել էր բնության ուժերի տտրոմկը։ Բնության արհավիրքների դեմ պայքարելու նպատակով մարդիկ միավորվում էին և նյութական կյանքի պահանջների բավարարման համար նրանց մղած համատեղ պայքարը առաջ էր բերում յուրացման կոլեկտիվ ձև. «Նախնադարյան հասարակարգը իրենից համայքն է ներկայացնում, որտեղ տնտեսությունը վարվում էր կոմունալ ձևով»[2],— գրել է Ալ. Մյասնիկյանը։

Տնտեսագիտական հարցերին նվիրված աշխատություններում և հոդվածներում Ալ. Մյասնիկյանը քննարկելով մարդկային հասարակության զարգացման ընթացքը, ցույց է տվել, որ հասարակական տնտեսական ֆորմացիաները հերթափոխվել են արտադրողական ուժերի մակարդակի և արտադրա-

---

[1] Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 67։

[2] ՄԼԻ Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 4004, ց. 3, գ. 12, թ. 393։

կան հարաբերությունների միջև առաջացած հակասության հետևանքով։ Ըստ որում, նա ընդգծել է նաև այն հանգամանքը, որ նոր արտադրողական հարաբերությունները առաջանում են ոչ թե սոցիալական հեղափոխությունից անմիջապես հետո, այլ դեռևս մինչև այդ հեղափոխությունը։ «Ժամանակակից կապիտալիզմի սաղմերը առաջացել են դեռևս 15-րդ դարի սկզբին»[3], ֆեոդալական հասարակարգի ընդերքում, որտեղ սկսեց ծնվել ու զարգանալ բուրժուազիան։

Անդրադառնալով նախնադարյան համայնական հասարակության պատմությանը, Ալ. Մյասնիկյանը նշել է, որ այդ հասարակարգում չեն եղել դասակարգեր, դասակարգային պայքար և շահագործում, որովհետև մասնավոր սեփականություն չի եղել։ Իր այս մտքը հաստատելու համար, նա ելնելով մարքսիստական ուսմունքից, «Հասարակական դասակարգերի մասին» ուսումնասիրությունում ցույց է տվել, որ նյութական բարիքների բաշխման էությունը արտադրողական ուժերի զարգացման հետևանքով դարերի ընթացքում փոփոխության է ենթարկվել։ Այսպես, երբ նետին և աղեղին փոխարինել է հրացանը, որսորդությամբ զբաղվող ցեղերի միջև գա առաջ է բերել նաև փոփոխություններ բաշխման պրոցեսում[4]։

Նա նշել է, որ դեռ անհիշելի ժամանակներից սկսած, երբ արդեն կային տարբեր դասակարգեր, մեծամասնությունը միշտ շահագործվել է փոքրամասնության կողմից։ Ամենաբիրտ, ֆիզիկական բռնության վրա հիմնված շահագործողական կարգերը եղել են ստրկատիրական, այնուհետև նրան փոխարինող ֆեոդալական հասարակարգերում։ «Կեղեքիչների բանակը,— գրել է Ալ. Մյասնիկյանը,— ծծում էր բազմամիլիոն ստրուկ գյուղացիության վատտակը, հրով ու սրով լռեցնելով նրա ազատագրական ամեն մի ձգտում»[5]։

Զարգացնելով իր գաղափարները հասարակության զարգացման մասին, Ալ. Մյասնիկյանը անդրադարձել է կապիտալիստական արտադրական հարաբերությունների առաջացման և զարգացման պրոցեսին՝ ցույց տալով, որ վերջինս ավելի առաջադիմական է եղել ֆեոդալականի համեմատությամբ, որովհետև նա լայն հնարավորություն է ստեղծել արտադրողական ուժերի զարգացման համար։ «Հասնելով զարգացման որոշ աստիճանի՝ նա (բուրժուազիան— Հ. Հ.) ըմբոստացավ ավատական կարգերի դեմ և սկսեց կազմակերպված ու երկարատև կռիվ։ Հրապարակ իջնելով հանուն ազատության. նա քաշեց իր հետևից և աշխատավոր մասսաներին։ Ավատական կարգերը չդիմացան նրանց միացած գրոհներին և խորտակվեցին։ Ազատված ավատականության կապանքներից՝ բուրժուազիան մի նոր դարագլուխ բաց արավ համաշխարհային էվոլուցիայի մեջ, հսկայական թռիչք հաղորդեց մարդկային աշխատանքին, արդյունագործությանը և առևտրին»[6]։

Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման մասին խոսելիս Ալ. Մյասնիկյանը նշել է, որ բուրժուական հարաբերությունները, իրենց ոլորտի մեջ են ներգրավել ամբողջ Ռուսիան։ «Հին տնտեսական շղթաները քանդված են,— գրում է նա,— նրանց տեղը բռնել է համաշխարհային կապիտալը. նա մտել է սրտադրության յուրաքանչյուր խորշը, ձևակերպել ու հարմարեցրել

3 Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 199։
4 «Նոր կյանք», 1912, № 3—4, էջ 147—148։
5 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 4004, ց. 3, գ. 14, թ. 2։
6 Նույն տեղում, թ. 3։

է այն համապատասխան բնույթի. մի խոսքով՝ կապիտալիզմը Ռուսիայի ողջ տնտեսակարգը հնաշրջել և իր տիրապետության դրոշմն է դրել նրա վրա»[7]։ Կ. Մարքսի «Կապիտալի» և Վ. Ի. Լենինի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատությունների հիման վրա, վերլուծելով կապիտալիզմի զարգացումը, Ալ. Մյասնիկյանը դեռևս 1912 թ. քննադատում էր բոլոր նրանց, ովքեր ժխտում էին այդ զարգացումը։ Եթե ոմանք պնդում էին, «թե կապիտալիզմը խորթ է մեր երկրին... այժմ սկսել են «խոստովանել», որ Ռուսիան էլ է գնում քաղաքակիրթ երկրների ճանապարհով»[8]։

Մարքս-լենինյան տեսակետով վերլուծելով նաև գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացման հարցը, Ալ. Մյասնիկյանը գրել է. «Արդյոք գյուղատնտեսությունը մի կո՞ղմն է կանգնած կապիտալիզմից, արդյոք նա իր զարգացման ուրույն և անկախ ուղի՞ն ունի։ Ո՛չ, իհարկե, կապիտալիզմը մտել է և գյուղ, նա այնտեղ բռնած ունի իր ձեռքում կապիտալիզացիայի և կենտրոնացման «սարսափելի գաղտնիքը»։ Անշուշտ, նախկին համառ գլուխներին հետևող այսօրվա նույնքան համառ գլուխները կարծում են, որ գյուղատնտեսությունը իր զարգացման տարբեր օրենքներն ունի, ևս առավել մեզ մոտ»[9]։

Հասկանալի է, որ կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում ունեցել է իր առանձնահատկությունը։ Դեռ XIX դ. կեսերին Ռուսաստանում գոյություն ունեին ճորտատիրական կարգեր, որի հետևանքով արդյունաբերության զարգացումը չէր կարող ընթանալ արագ տեմպերով։ «Տասնևիններորդ դարի սկզբներից կապիտալիզմը Ռուսիայում սկսում է առողջ ծիլեր արձակել. մինչև ճորտերի ազատագրությունը նրա զարգացումը դանդաղ քայլերով է առաջ գնում. պատճառը պարզ է՝ ճորտային կես-բնական տնտեսության խոչընդոտները»[10]։ Դա է պատճառը, որ կապիտալիզմի ազդեցության տակ ճորտատիրությունը քայքայվում է և կապիտալիզմը իր ոլորտի մեջ է քաշում նաև գյուղը։ Ժամանակները փոխվեցին, —նշել է Ալ. Մյասնիկյանը,— մեռան հին նարոդնիկները, որոնք համայնական նավակներով մտածում էին սոցիալիզմի խաղաղ ափը հասնել։ Սակայն նոր նարոդնիկները դաս չառնելով իրենց ավագ եղբայրներից, նորից շարունակում են մնալ նրանց գաղափարական սխալ մակարդակի վրա։

Ալ. Մյասնիկյանը մարքսիստական տեսանկյունով է քննադատել էսէռների և նարոդնիկների ուսմունքը կապիտալիզմի զարգացման մասին։ Նա ընդգծել է, որ նրանք չհասկանալով կապիտալիզմի զարգացման էությունը, պնդում են, թե կապիտալիզմի զարգացումը քաղաքում տեղի է ունենում նրա կենտրոնացման և մանր ձեռնարկությունները զրոյի հավասարեցնելու գընով, իսկ գյուղում կապիտալիզմը չի զարգանում մանր տնտեսությունների առկայության հետևանքով։ Ըստ որում, նրանց կարծիքով ոչ մի փոփոխություն չի կատարվելու արտադրողների կյանքում։ Պատասխանելով այդպիսի հակագիտական թեզին, Մյասնիկյանը շեշտել է, որ հասարակության զար-

7 Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 50։
8 Նույն տեղում, էջ 50—51։
9 Նույն տեղում, էջ 51։
10 Նույն տեղում, էջ 43։

գացումը ոչ թե պաշտպանելու է մանր արտադրողներին, այլ ոչնչացնելու է նրանց։ «Մանր տնտեսությունը վաղուց է կործանման դատապարտված»[11]։

Ֆեոդալական հասարակարգի համեմատ կապիտալիստական հասարակարգի առաջադիմական լինելու հարցին անդրադառնալով, Ալ. Մյասնիկյանը նշում էր, որ նա ճանապարհ է հարթում սոցիալիզմի համար։ Նա ասում էր, որ «...կապիտալիզմի շարիքները այնպես գռեհիկ չեն, ինչպես ավատականության արհավիրքները, որովհետև ավատականությունը— դա լճացում է նշանակում, իսկ կապիտալիզմը՝ շարժում, որովհետև կապիտալիզմը ավելի հեշտ ու արագ կերպով է հարթում սոցիալիզմի ուղին»[12]։

Բուրժուական հասարակարգի տնտեսական և քաղաքական էության ուսումնասիրության հիման վրա Ալ. Մյասնիկյանը նկատել է, որ կապիտալիզմը, ոչնչացնելով ֆեոդալական կապանքները, ստեղծում է իրեն հատուկ շահագործման եղանակ։ «Կապիտալիզմը դրական երևույթ է այն չափով, որ չափով նա տապալում է ավատական սիստեմը, իսկ բացասական՝ որ չափով որ նա իրան հատուկ շահագործում է առաջ բերում»[13]։ Բուրժուազիան,—նշել է նա,— սկզբնական շրջանում հանդես գալով միահեծանության դեմ, հեղափոխականություն հանդես բերեց, իսկ այնուհետև խոնարհեց հեղափոխությունից, բուրժուազիան դարձավ և այսօր էլ մնում է որպես հակահեղափոխական մի ուժ։ Խորտակելով ավատական իրավակարգը, շարունակում է Ալ. Մյասնիկյանը,— նույն բուրժուազիան հաստատեց իր սեփական իշխանությունը, կեղեքման մենաշնորհ վայրենի բիրտ ուժերից անցավ ավելի քաղաքակիրթ ուժին՝ կապիտալին. «Մեծ հեղափոխության հռչակավոր նշանաբանները— ազատություն, հավասարություն, եղբայրություն, որոնց համար աշխատավորը չէր ափսոսել իր արյունը թափելու, մնացին իբրև պատրանք նրա համար, իսկ բուրժուազիայի ձեռքին իբրև միջոց գրաված դիրքը ամրապնդելու։ Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել քանի դեռ անձեռնամխելի էր մնում մասնավոր սեփականության սկզբունքը, որի հիմնաքարն է հասարակական անհավասարությունը»[14]։

Ալ. Մյասնիկյանը խորապես ուսումնասիրելով մարդկային հասարակության զարգացման օրենքները, մատերիալիստական տեսանկյունով էր վերլուծում դասակարգերի և դասակարգային պայքարի հարցերը։ Նա այն համոզմունքին էր, որ դասակարգերը պատմական կատեգորիա են և առաջացել են մասնավոր սեփականության հիմքի վրա։ Նախնադարյան համայնական հասարակարգում մասնավոր սեփականության բացակայության շնորհիվ չկան և չէին կարող լինել դասակարգեր։ «Ընկերավարական կարգերում... խոսք չէր կարող լինել դասակարգերի գոյության մասին»[15],— գրել է նա։

Դասակարգերի և դասակարգային պայքարի մասին Ալ. Մյասնիկյանի հայացքները իրենց արտացոլումն են գտել նրա «Հասարակական դասակարգի մասին» աշխատությունում, որն արժանի է լուրջ ուշադրության։ Նա գրում էր, որ ներկա ժամանակաշրջանում դասակարգային շերտավորումը պարզորոշ է և սուր կերպարանք է ընդունել։ Հենց այս հարցի շուրջ գաղափարա-

11 Նույն տեղում, էջ 173։
12 Նույն տեղում, էջ 124։
13 Նույն տեղում, էջ 128։
14 Մշի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 4004, ց. 3, գ. 14, թ. 3։
15 Նույն տեղում, թ. 402։

կան ուժեղ պայքար է ծավալվել հասարակական գիտությամբ զբաղվող գրեթե բոլոր գիտնականների և պետական գործիչների միջև։ «Կա՞ մի հասարակական խնդիր, որ ներկված չլինի գերազանցապես այս կամ այն հասարակական գրուպայի գույնով. դասակարգային շահ, դասակարգային ձգտում, դասակարգային շարժում, դասակարգային հոսանք, դասակարգային քաղաքականություն— ամենուրեք և ամեն րոպե»[16]։ Տիրող դասակարգի գաղափարախոսները, սակայն, ցանկանում են քողարկել դասակարգային շերտավորումը։ «Բայց այդ հանգամանքը,—նշում է Ալ. Մյասնիկյանը,—ժխտել կարող են միայն հասարակական մտքի տհաս ու միամիտ տիպերը»[17]։ Նա զարգացնում է այն միտքը, որ պատմության ընթացքում այս կամ այն դասակարգը միանգամից չի առաջացել, որ դասակարգը ևս ապրել է իր էվոլյուցիան։ «Ինչպես է առաջ գալիս հատարակական դասակարգ կոչվածը»,— հարցնում է Ալ. Մյասնիկյանը և պատասխանում. «Նա (դասակարգը— Հ. Հ.) ...իր զարգացման երկու շրջանն ունի։ Առաջին շրջանում դասակարգը տակավին լոկ տնտեսական խավ է՝ հակադրված տնտեսական այլ տարրերին. նա չունի գիտակցված իդեոլոգիան, նա դեռ հեռու է դասակարգային կռվից. նա տակավին դասակարգ չէ... Երկրորդ շրջանում դասակարգը արդեն միանգամայն կերպարանավորված է, որովհետև նա հաղորդակից է իր տնտեսական ու քաղաքական կռվին, ունի ուրույն քաղաքականություն. նա դասակարգ է իր մեջ, ինքնին, իր համար։ Նա հասարակական դասակարգ է»[18]։ Ալ. Մյասնիկյանը ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ հասարակական գործիչն ու սոցիոլոգը ոչ մի դեպքում չեն կարող աչքաթող անել դասակարգ բառի իմաստը, նրա էությունը։

Ալ. Մյասնիկյանը միանգամայն ճիշտ է նկատել, որ ժամանակակից հասարակական բոլոր հարցերը լուծելու համար անհրաժեշտ է նախ և առաջ պարզել դասակարգերի էությունը ճշմարտության տեսանկյունով, այսինքն՝ այնպես, ինչպես նա կա։ «Ի՞նչ է նրա բովանդակությունը,— գրել է նա,— ահա մի հարց, առանց որի անհնարին է ըմբռնել դասակարգային շահերի ու դասակարգային շարժումների էությունը, առանց այն լուծելու դժվար է հասկանալ հասարակական հոսանքների ու կուսակցությունների բնույթը, որովհետև վերջիններս հենվում են ամբողջապես կամ գլխավորապես մի որևիցե դասակարգի վրա։ Իսկ ընդհանրապես նա ճանաչել է տալիս ժամանակակից հասարակական բարդ երևույթներին»[19]։

Այս տեսակետից էլ շարադրելով իր հայացքները դասակարգերի մասին, Ալ. Մյասնիկյանը ցույց է տվել, որ հատկամարտ հասարակարգերում իրար դեմ են կանգնել ստրկատերերը և ստրուկները, կալվածատերերը և ճորտերը, կապիտալիստները և բանվորները։ Բոլոր հասարակարգերում ստրկատերերը, կալվածատերերը և բուրժուազիան դարեր շարունակ մեկը մյուսից դաժան կեղեքել են աշխատավոր մասսաներին և դա,— նկատել է Ալ. Մյասնիկյանը,— շարունակվելու է այնքան ժամանակ, քանի որ գոյություն ունի մասնավոր սեփականության վրա հիմնված անարդար կարգերը[20]։

---

16 Նույն տեղում, գ. 12, թ. 395։

17 Նույն տեղում, թ. 396։

18 Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 128—129։

19 «Նոր կյանք», 1912, № 1—2, էջ 54։

20 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 4004, ց. 3, գ. 14, թ. 3։

Բուրժուական հասարակարգի դասակարգերի էությունը բացահայտելիս, Ալ. Մյասնիկյանը ցույց է տալիս, որ կապիտալիստական հակամարտ հասարակարգում գոյություն ունեցող արտադրական եղանակին համապատասխանում է շահագործման եղանակը, հետևաբար՝ նաև դասակարգային շերտավորումը։ Ըստ որում, արտադրության տիրապետող եղանակի ժամանակ հին արտադրաեղանակի մնացորդները, դեռևս կենտունակ են, բայց անցողիկ։

Անդրադառնալով բանվոր դասակարգի հարցին Ալ. Մյասնիկյանը ընդգծում է, որ սեփականաղուրկ պրոլետարիատը իր կյանքի գոյությունը ապահովելու նպատակով ստիպված է ենթարկվել վարձատրությամբ կապիտալիստին վաճառել իր աշխատուժը։ Բանվորը արտադրության միջոցների նկատմամբ ոչ մի իրավունք չունի, նա ընչաղուրկ է։ Սեփականատեր կապիտալիստը, ընդհակառակը, վաճառելով արտադրված ապրանքը, կարողանում է մի մասը ծախսել հումք ձեռք բերելու համար, մի մասը վճարել բանվորին իբրև աշխատավարձ, իսկ նշանակալից մասը գրպանում է իբրև շահույթ։ Ավելի կոնկրետ, պրոլետարիատը արտադրողն է, բայց նրա տերը չէ։ Պրոլետարիատը, ըստ Մյասնիկյանի, մարդկային դլուխների մի անհամար բազմություն է, որ բանտարկված է կապիտալիստական արտադրություն կոչված երկաթյա վանդակում։

Կապիտալիստական արտադրաեղանակի հաղթանակից հետո կալվածատիրական հողատիրությունը դեռևս շարունակվում է պահպանվել։ «Իսկ ո՞վ է հողատերը,— նշում է Ալ. Մյասնիկյանը,— մի անպետք ժառանգություն, որ նախկին ժամանակներից անցել է արդի մարդկության, սակայն չնայած դրան արտադրության մեջ նա տեղ ունի գրված», և տալով իր հողը մշակողին շահագործում է վերջինիս։ Եվ ահա կալվածատիրոջ և շահագործվող գյուղացու միջև «ծագում են արտադրական հարաբերություններ»[21]։

Կապիտալիստական հասարակարգում, բացի հիմնական դասակարգերից, գոյություն ունեն բազմաքանակ խավեր՝ մանր գյուղացիներ, արհեստավորներ, մանր առևտրականներ, միջնադասակարգեր, «կես դասակարգեր, ստորադաս ու մանր դասակարգեր և դասակարգային այլ խմբակցություններ»[22]։ Մտավորականությունը երբեք դասակարգ չի եղել և չի կարող լինել, որովհետև որպես մի ամբողջություն նա անմիջականապես կապված չէ արտադրության հետ։ Բայց նա տպրում է դասակարգերի ծալքերում,— նշում է Ալ. Մյասնիկյանը,— և նրա այս կամ այն հատվածը հարում է որևէ դասակարգի։

Վերլուծելով բուրժուազիայի և պրոլետարիատի, կալվածատիրոջ և գյուղացու շահերի հակադրության էությունը, Ալ. Մյասնիկյանը նշել է, որ բոլոր հասարակությունների մեջ, դեռ անհիշելի ժամանակներից ի վեր՝ մենք դիտում ենք դասակարգային բաժանումներ՝ իշխողներ և հպատակներ, կեղեքողներ և կեղեքվողներ։ Այդ հակամարտությունը կապիտալիստական հասարակարգում էլ ավելի է խորանում։

Բանավիճելով մի շարք բուրժուական սոցիոլոգների հետ և ժխտելով նրանց հակագիտական հայացքները դասակարգերի էության և բնորոշման հարցերում, Ալ. Մյասնիկյանը, հենվելով մարքս-լենինյան տեսության վրա տվել

---

21 «Նոր կյանք», 1912, № 3—4, էջ 152։

22 Նույն տեղում։

է դասակարգերի իր բնորոշումը։ «Դասակարգը,— ասում է նա,— հասարակական մի գրուպա է, որի անդամներն արտադրության պրոցեսում միատեսակ դեր են կատարում, որով և տարբերվում են հասարակական այլ խավերից»[23]։ Դասակարգերի այս բնորոշումը համընկնում է պլեխանովյան բնորոշման հետ։

Սակայն պետք է նշել, որ դասակարգերի բնորոշումը, ինչպես Պլեխանովի, այնպես էլ Մյասնիկյանի մոտ թերի է և չի արտահայտում դասակարգերի էությունը, որի սպառիչ բնորոշումը տվել է Վ. Ի. Լենինը[24]։ «Դասակարգեր կոչվում են մարդկանց մեծ խմբերը, որոնք տարբերվում են հասարակական արտադրության պատմականորեն որոշ սիստեմում իրենց գրաված տեղով, արտադրության միջոցների նկատմամբ իրենց ունեցած (մեծ մասամբ օրենքներով ամրապնդված և ձևակերպված) վերաբերմունքով, աշխատանքի հասարակական կազմակերպման մեջ իրենց ունեցած դերով և, հետևաբար, հասարակական հարստության այն բաժնի ստացման եղանակներով ու չափերով, որ իրենց տրամադրության տակ ունեն»[25]։

Հենվելով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» դրույթների վրա և հանդես գալով բուրժուական սոցիոլոգների հակագիտական կեղծ տեսությունների դեմ, Ալ. Մյասնիկյանը նշում է, որ ինչպես դասակարգերը, այնպես էլ դասակարգային պայքարը պատմական կատեգորիա են, որ շահագործման վրա հիմնված հասարակությունների հակամարտ դասակարգերը միշտ կռվի մեջ են եղել։ Նա նշում է, որ դասակարգային պայքարը հետևանք է շահերի հակադրության և որ, ինչպես նշել է Կ. Մարքսը, բոլոր տեսակի հարաբերությունները բխում են նյութական հարաբերություններից։

Ուշագրավ է նաև Ալ. Մյասնիկյանի մղած պայքարը հայ իրականության մեջ գոյություն ունեցող հակամարքսիստական, բուրժուական-կալվածատիրական և կղերական հոսանքների դեմ, որոնք ամեն կերպ ձգտում էին մթագնել հայ բանվորների ու աշխատավորության հեղափոխական զարթոնքը։

Հայ իրականության մեջ հակամարքսիստական կուսակցությունների ղեկավարները պաշտպանելով բուրժուազիայի շահերը, ձգտում էին համոզել բանվորներին, որ նրանք չեն շահագործվում։ Օրինակ, Բ. Իշխանյանը պնդում էր, որ մասնավոր սեփականությունը իբր թե շահագործումից զերծ խաղաղ աշխատանքի արդյունք է, թե շահագործում գոյություն չունի, «հարստությունները խաղաղ տնտեսական մրցության բնական պրոցեսով կենտրոնանում են ուժեղների ձեռքում», և որ հատկապես հայ «բուրժուազիան «ուրիշի սեփականությունը չի յուրացրել»[26]։ Պատասխանելով նրան, Ալ. Մյասնիկյանը հեգնանքով նկատում է, որ իհարկե բուրժուազիան ուրիշի սեփականությունը չի յուրացնում, քանի որ նա սրբությամբ հարգում է մասնավոր սեփականության սկզբունքը, բանվորներին էլ բուրժուազիան ասում է, թե «ես քեզ

23 Նույն տեղում, էջ 153։
24 Նույն տեղում, էջ 153—154։
25 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 515։
26 Տե՛ս Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 123։

չեմ շահագործում. դու քո կամքով ծախում ես քո ուժը, ես էլ ընդունված ձևով գնում եմ այն, այստեղ ամեն ինչ օրինական է»[27]։

Կապիտալիստական շահագործումը քողարկելու և աշխատավոր մասսաներին խտրելու նպատակով Բ. Իշխանյանը հայտարարում էր թե կապիտալիզմի բարիքներից օգտվում է ամբողջ ժողովուրդը, թե կապիտալիզմը գյուղացուն իրավական ազատություն է տվել, կապիտալիզմը աղքատներին հաց է տալիս և այլն։ Բացահայտելով այդ կեղծիքը, Ալ. Մյասնիկյանը գրել է. «Կապիտալիզմի, ինչպես և ավատականության հիմքն են կազմում աշխատանքի շահագործությունը և մասնավոր սեփականությունը։ Շահագործվողները կռվում են դրա դեմ. նրանք առաջ են մղում արտադրության գործիքների մասնավոր սեփականության ու կեղեքման ոչնչացման պահանջը, նրանք ընկերավարության են ձգտում»[23]։

Զարգացնելով իր այդ միտքը, Ալ. Մյասնիկյանը նշում է, որ բուրժուական հեղաշրջման վատագույն օրինակը տվել է 1789 թ. ֆրանսիական մեծ հեղափոխությունը։ Սակայն նրա ազատության, հավասարության և եղբայրության նշանաբանները ծառայեցին բուրժուազիային՝ ընդդեմ աշխատավոր մասսաների։ «Իրավա-քաղաքացիական կյանքում նույն ֆրանսիական բուրժուազիան երգեց ու փառաբանեց մասնավոր սեփականության սկզբունքը»[29], որովհետև նրա հռչակած ազատությունը, ազատություն էր շահագործման համար, հավասարությունը ձևական դուրս եկավ, տնտեսական և քաղաքական անհավասարության հետևանքով։ «Այդ ամենը,— շարունակում էր նա,— համայն եվրոպական բուրժուազիայի համար անխախտելի պատգամ դարձավ, իսկ մասսաների համար՝ բացատական պատգամ, քանի որ ինքը բուրժուազիան իր հեղափոխական բարձրից անցել է պահպանողական դիրքերին»[30]։

Ալ. Մյասնիկյանը նշում է, որ բանվոր դասակարգը չի կարող հաշտվել բուրժուազիայի հետ, չի կարող տարվել բուրժուազիայով ու նրա ստեղծած «բարիքներով»։ Բուրժուազիան լավ է հասկանում,— շեշտում է Ալ. Մյասնիկյանը, —որ իր քաղաքականությունը ռեակցիոն է, և պետք է հետևաբար ծուռ հայելու մեջ ցույց տա իրերի վիճակը և պրոպագանդի «բարեկամություն», «համերաշխություն դասակարգերի միջև»։ Հակառակ դրան «պրոլետարիատը կազմակերպվում և զինվում է այն զենքով, որով նա կխորտակի կապիտալիստական հասարակարգը և կդնի նոր հասարակարգի ամուր հիմքերը»[31]։ Ավելին, բուրժուական լրագրողները հայտարարում են, թե իրենց քաղաքականությունը չի պատկանում և ոչ մի դասակարգի, թե այն ապադասակարգային է։ «Բուրժուազիան,— գրել է նա,— խաբում է, նա անկուսակցական դիմակի տակ իրականացնում է իր դասակարգային կուսակցական քաղաքականությունը»[32]։

Նա ցույց է տվել, որ դեռևս ստրկատիրական հասարակարգում «հարուստները ստիպված էին մի կերպ աղքատների «սիրտն առնել», մտածելով չլինի թե նրանք մի գեղեցիկ օր տակն ու վրա անեն ամբողջ քաղաքական կարգերը։

---

27 Նույն տեղում, էջ 123։

28 Նույն տեղում, էջ 124։

29 Նույն տեղում, էջ 125։

30 Նույն տեղում։

31 А. Ф. Мясникян (Мясников), Избранные произведения, Ереван, 1965, стр. 19.

32 Նույն տեղում, էջ 22։

Դրա համար հնարվում էր մի միջոց՝ բարեգործություն»[33]։ Շարունակելով իր միտքը, նա ընդգծել է, որ միայն դասակարգային երկյուղն է առաջ բերել բարեգործության գաղափարը։ «Տիրապետող դասակարգերը բարեգործության դիմակի տակ աշխատում էին քաղցած ամբոխին իրենց կողմը գցել և այսպիսով սեփական դիրքերն ամրապնդել»[34]։

Քանի որ դասակարգային պայքարը իր ոլորտի մեջ է առնում հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառները, այդ պատճառով էլ բուրժուազիան՝ պրոլետարիատին դասակարգային պայքարից հեռու պահելու նպատակով դիմում է ամեն մի միջոցի։ Ալ. Մյասնիկյանը Բաքվի բանվորներին իրազեկ էր դարձրել այդ ուղղությամբ բուրժուազիայի կողմից իրականացվող խաբեբայություններին։ «Բարեգործության դիմակը,— ասում էր նա,— այսօր բուրժուազիայի դեմքն է։ Այժմ գա շատ մոդայական ու հարգի ապրանք է դառել։ Հասարակական ու մասնավոր բարեգործությունը մեր օրերում, կարելի է ասել, ծաղկած վիճակում է։ Եվ որքան էլ այդ բարեգործությունը անդուրեկան լինի բուրժուազիայի համար, նա ստիպված է այդ անել, որովհետև դասակարգային բնազդը այդպես է թելադրում»[35]։ Բաքվի պայմաններում նավթագործների աշխատավարձի այս կամ այն ավելացումը, բանվորների նկատմամբ իրականացվող այս կամ այն զիջումները նպատակ ունեն կաշառել պրոլետարիատին և քաղաքական կյանքից հեռու պահել նրան։ «Բարեգործությունը հեռացնում է դասակարգային բախումների ուրվականը։ Եվ ահա դասակարգային ինքնաճանաչողությունը խափանելու նպատակով տիրող տարրերը բարեգործության պոչից են բռնում»[36]։ Այդ բոլորը, նշել է Ալ. Մյասնիկյանը, կոչված են ամրացնելու տիրող դասակարգի դիրքերը։ Շարունակելով իր մտքերը, Ալ. Մյասնիկյանը ընդգծել է, որ պրոլետարիատը չի կարող ենթարկվել նման խաբեբայությունների, քանի որ «ամեն տեղ աչքի է զարնում հասարակության արթնացումը, որ ավելի քան ակնհայտ է ու նշանակալից պրոլետարական բանակում, հասարակության այդ ամենաառաջադեմ ու ազատարար խավի ծոցում»[37]։

Այսպիսով, Ալ. Մյասնիկյանը հասարակության զարգացման և դասակարգային պայքարի մասին մարքս-լենինյան տեսության հիման վրա ցույց է տվել, որ դասակարգերը լինելով պատմական կատեգորիա, մասնավոր սեփականության գոյության հետևանքով դարերի ընթացքում թշնամական են եղել միմյանց նկատմամբ, որ այդ սեփականության ոչնչացումով հասարակության զարգացումը կընթանա դեպի անդասակարգ հասարակություն՝ կոմունիզմի կառուցման միջոցով։

---

33 «Նոր կյանք», 1912, № 3—4, էջ 105։
34 Նույն տեղում, էջ 106։
35 Նույն տեղում, էջ 107։
36 Նույն տեղում։
37 Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 118։

А. МЯСНИКЯН О РАЗВИТИИ ОБЩЕСТВА И КЛАССОВОЙ БОРЬБЫ

О. А. ОВСЕПЯН

Резюме

На основе учений К.Маркса, Ф. Энгельса и В. Ленина А. Мясникян доказывает, что главной, определяющей силой развития общества является способ производства материальных благ и что изменение и развитие производства всегда начинается с изменения и развития производительных сил и прежде всего с изменения и развития орудий производства.

Классовая борьба есть исторический закон, который действовал в рабовладельческом, феодальном и сейчас действует в капиталистическом обществе, подчеркивал А. Мясникян. В каждой общественно-экономической формации борьба классов имеет свои особенности. Только рабочий класс своей борьбой способен заменить капиталистическую формацию, уничтожить угнетение и эксплуатацию человека человеком, установить диктатуру пролетариата для построения коммунистического общества.